



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

16 դեկտեմբերի 2024 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետեւյալ կազմով.

նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի,

զեկուցող դատավոր՝ Ա.Ա. Զաքարայի, դատավորներ՝ Ա.Մ. Աժիբբախմովայի, Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաեի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

քարտուղարությամբ՝ Բ.Մ. Այսաուտովի,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

դեկլարավելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

խորհրդատվական եզրակացություն է տրամադրում ըստ Ռուսաստանի Դաշնության դիմումի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի, Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի եւ Եվրասիական

տնտեսական միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանման վերաբերյալ:

I. Դիմումատուի հարցը

1. Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս Ռուսաստանի Դաշնության Գլխավոր դատախազության (այսուհետ՝ դիմումատու), դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի (այսուհետ՝ Միություն) եւ Միության մարմինների որոշումների, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի («Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի թիվ 1 հավելված, այսուհետ՝ ԵԱՏՄ ՄՕ) 23-րդ հոդվածի 4-րդ կետի պարզաբանման վերաբերյալ դիմումով:

2. Դիմումատուն նշում է, որ Դատարան դիմում ներկայացնելու պատճառ են եղել տնտեսվարող սուբյեկտի՝ «Ատլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Ռուսաստանի Դաշնություն), եւ Ռուսաստանի Դաշնային մաքսային ծառայությանը կից մաքսային քաղաքականության իրականացման հարցերով փորձագիտական խորհրդատվական խորհրդի անդամների դասակարգման եւ ծագման երկրի հարցերով մշտական հանձնաժողովի դիմումները, որոնք վկայում են ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների անորոշության մասին:

3. Ի հիմնավորումն դիմումի, մեջբերելով ԵԱՏՄ ՄՕ 21-րդ եւ 23-րդ հոդվածների դրույթները, նկատելով տարանջատում որոշումների երկու տեսակների միջեւ՝ ապրանքի դասակարգման մասին նախնական որոշում եւ ապրանքների առանձին տեսակների դասակարգման մասին որոշում (պարզաբանում), դիմումատուն նշում է, որ նշված նորմերում ապրանքի դասակարգման մասին նախնական որոշումների կիրարկմամբ գործածվում է «ապրանք» եզրույթը, այլ ոչ թե «ապրանքների առանձին տեսակ» եզրույթը: Դրանով պայմանավորված՝ ըստ դիմումատուի, ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները թույլ են տալիս եզրակացություն անել ապրանքի մեկ որոշակի ապրանքատեսակի (մակնիշի, մոդելի, ձեւափոխության) վերաբերյալ ապրանքի դասակարգման մասին նախնական որոշում կայացնելու անհրաժեշտության մասին, եւ այդ դեպքում տրամադրվող նախնական որոշումների քանակը գործնականում պետք է համընկնի տնտեսավարող սուբյեկտի հայտնած՝ ապրանքի մեկ տեսակի ապրանքատեսակի, մակնիշների, մոդելների, ձեւափոխության քանակի հետ, չնայած որ դրանք բոլորը դասվելու են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) մեկ ծածկագրին: Միեւնույն ժամանակ՝ դիմումատուն համարում է, որ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի ձեւակերպումը չի բացառում նաեւ այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի, հնարավոր է ընդունել դասակարգման մասին մեկ նախնական որոշում՝ դրանում միաժամանակ նշելով դասակարգման նույնական հատկանիշներով միեւնույն ապրանքի մի քանի տեսակներ:

Այսպիսով, ինչպես նշում է դիմումատուն, մի կողմից, ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի նորմի բովանդակությունը կարող է նշանակել, որ ապրանքի դասակարգման մասին մեկ նախնական որոշումը տրամադրվում է միայն ապրանքի մեկ ապրանքատեսակի համար, իսկ մյուս կողմից՝ թույլատրվում է ապրանքի յուրաքանչյուր հայտնած անվանման համար դասակարգման մասին

մեկ նախնական որոշում ընդունելու հնարավորություն՝ ապրանքին շնորհելով դասակարգման ծածկագիր՝ անկախ ապրանքատեսակների, մակնիշների, մոդելների, ձեւափոխության քանակից:

4. Դիմումատուն այս կապակցությամբ խնդրում է Դատարանին պարզաբանել ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները եւ խորհրդատվական եզրակացություն տրամադրել հետեւյալ հարցերի վերաբերյալ՝

1) արդյո՞ք ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի ձեւակերպումը թույլ է տալիս Միության անդամ պետության մաքսային մարմնին ապրանքի դասակարգման մասին մեկ նախնական որոշում կայացնել մեկ դիմումի մեջ նշված՝ ապրանքների մի քանի ապրանքատեսակների, մակնիշների, մոդելների, ձեւափոխության վերաբերյալ, այն պայմանով, որ դրանք բոլորը, դասակարգման օբյեկտիվ հատկանիշներով պայմանավորված, դասվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ մեկ ստորաենթադիրքին,

2) ինչպե՞ս է հարաբերակցվում ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթը ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետի հետ՝ այդ նույն հոդվածի 2-րդ կետի հետ դրա փոխկապակցվածության մեջ:

II. Դատարանի եզրահանգումները

5. Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (Պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Ստատուտ) 2-րդ կետի համաձայն, Դատարանի նպատակը, Ստատուտի դրույթներին համապատասխան, Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների միատեսակ կիրառությունն ապահովելն է անդամ պետությունների կողմից: Ընդ որում, Ստատուտի 102-րդ կետով սահմանված է, որ Դատարանի որոշումը չի փոփոխում եւ (կամ) չի վերացնում Միության գործող իրավունքի նորմերը եւ անդամ պետությունների օրենսդրությունները եւ չի ստեղծում նորերը:

6. Ղեկավարվելով Ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան Պայմանագրի դրույթները պարզաբանում է միմյանց միջև դրանց համակարգային փոխկապակցվածության մեջ՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, հաշվի առնելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, որոնց համաձայն, պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի եւ նպատակների լույսի ներքո:

7. Պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն, Մաքսային միությունն անդամ պետությունների առևտրատնտեսական ինտեգրման ձեւ է, որով նախատեսվում է միասնական մաքսային տարածք, որի սահմաններում փոխադարձ առևտրի մեջ չեն կիրառվում մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանական, հակագնացման ու փոխհատուցման միջոցներ, եւ որտեղ գործում են Միության միասնական մաքսային սակագինը եւ երրորդ կողմի հետ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման միասնական միջոցները:

8. Պայմանագրի 3-րդ հոդվածով, 25-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ, 4-րդ ենթակետերով սահմանված է, որ անցումային ժամանակահատվածների ավարտից հետո մաքսային միության գործունեությունը՝ առանց բացառումների եւ սահմանափակումների, Միության հիմքերից մեկն է, անդամ պետությունների մաքսային միության շրջանակներում իրականացվում է մաքսային կարգավորում, կիրառվում են երրորդ կողմերի հետ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման միասնական միջոցները:

Պայմանագրի 32-րդ հոդվածի, ԵUSU ՍՕ 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն, Միությունում միասնական մաքսային կարգավորումն իրականացվում է Միության իրավունքը կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները

կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան՝ ներառյալ ԵԱՏՄ ՄՕ-ն, ինչպես նաև Պայմանագրի դրույթներին համապատասխան:

9. Պայմանագրի 42-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության մաքսային տարածքում կիրառվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ն ու Միության միասնական մաքսային սակագինը, որոնք հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից եւ Միության առևտրային քաղաքականության գործիքներ են:

ԵԱՏՄ ՄՕ 19-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ն ապրանքների նկարագրման եւ ծածկագրման համակարգ է, որն օգտագործվում է ապրանքների դասակարգման համար՝ մաքսասակագնային կարգավորման միջոցներ, արտահանման մաքսատուրքեր, արգելքներ ու սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանական միջոցներ կիրառելու, մաքսային վիճակագրություն վարելու նպատակներով:

10. ԵԱՏՄ ՄՕ 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուն եւ այլ անձինք ապրանքների դասակարգումն իրականացնում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝ մաքսային հայտարարագրման ժամանակ եւ այն դեպքերում, երբ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան՝ մաքսային մարմին են հայտնում ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան: ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման ծածկագրերի կիրառումը հանգեցնում է իրավական հետեւանքների, որոնք կապված են մաքսատուրքերի դրույթաչափերի եւ, համապատասխանաբար, մաքսային վճարների գանձման, ոչ սակագնային միջոցների, արգելքների ու սահմանափակումների կիրառման, մաքսային վիճակագրության ձեւավորման եւ դրա վրա հիմնված՝ Միության անդամ պետությունների մաքսային քաղաքականության հետ:

11. Ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումներ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 23-րդ հոդվածի 4-ր կետ) եւ ապրանքների առանձին տեսակների մասին

որոշումներ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 21-րդ հոդվածի 7-րդ կետ) ընդունելիս պետք է ապահովել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի միատեսակ կիրառության սկզբունքը: Հաշվի առնելով, որ դիմումատուն խնդրում է պարզաբանել՝ թե ինչպե՞ս են հարաբերակցվում նշված նորմերը, նպատակահարմար է համեմատել որոշումների այդ երկու տեսակները:

12. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային մարմիններն անձանց դիմումով կարող են իրականացնել ապրանքների դասակարգում նախքան դրանց մաքսային հայտարարագրումը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ եւ չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումներ ընդունելու միջոցով:

13. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 21-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներն ընդունվում են ԵԱՏՄ ՄՕ-ի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը: Ապրանքների դասակարգումը» 3-րդ գլխին համապատասխան:

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 21-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված է, որ ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումները կիրառվում են այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմիններն ընդունել են ապրանքների դասակարգման մասին այդպիսի նախնական որոշումներ, իսկ ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաեւ այլ անդամ պետությունների տարածքներում: Ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների ծածկագրերի վերաբերյալ տվյալները, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան, նշվում են ապրանքների հայտարարագրերում՝ ապրանքների դասակարգման մասին ընդունված նախնական որոշումներին համապատասխան:

14. ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերով սահմանված է, որ ապրանքի դասակարգման մասին նախնական որոշումն ընդունվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ պետք է անցկացվի ապրանքի բացթողումը դրա՝ մաքսային ընթացակարգով ձեւակերպման ժամանակ՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպման դեպքերի, եւ ապրանքի՝ որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ եւ ձեւափոխություն ներառող յուրաքանչյուր անվանման առնչությամբ:

15. Ելնելով ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի տեքստից՝ ԵԱՏՄ ՄՕ-ի 3-րդ գլխի մյուս իրավական նորմերի, այդ թվում՝ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 5-րդ կետի հետ դրա փոխկապակցվածությամբ, նախնական որոշումը իրավասու մաքսային մարմնի իրավակիրատ ակտ է, որն ուղղված է Միության մաքսային սահմանով որոշակի ապրանքի տեղափոխման ժամանակ ծագող մաքսային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառմանը: Այդ իրավակիրատ ակտը, լինելով ԵԱՏՄ իրավունքի սահմանված կարգով ձեւակերպված, մաքսային փաստաթուղթ է: Ապրանքի դասակարգման մասին նախնական որոշումը՝ որպես իրավակիրատ ակտ, ելնելով ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի տեքստից, ենթակա է ընդունման իրավասու մաքսային մարմնի կողմից որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ եւ ձեւափոխություն ներառող ապրանքի յուրաքանչյուր անվանման համար:

16. Ապրանքների առանձին տեսակի դասակարգումը, իր հերթին, իրականացվում է ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 6-րդ կետի եւ 22-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի հիման վրա:

ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակներով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմինները կարող են ընդունել որոշումներ եւ տալ պարզաբանումներ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ

օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված որոշումներն ու պարզաբանումները պարտադիր են այն անդամ պետության տարածքում ապրանքների դասակարգում իրականացնելիս, որի մաքսային մարմնի կողմից դրանք ընդունվել են: Նույն նպատակներով, ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումներ (պարզաբանումներ) ընդունելու լիազորություններով՝ ԵԱՏՄ ՄՕ 22-րդ հոդվածով օժտված է նաև Հանձնաժողովը:

Հանձնաժողովի կողմից ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումների ընդունման կարգը սահմանված է նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումների նախապատրաստման կարգի մասին» թիվ 284 որոշմամբ (այսուհետ՝ թիվ 284 կարգ):

Թիվ 284 կարգի 3-րդ կետին համապատասխան՝ ապրանքների առանձին տեսակն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգելու վերաբերյալ առաջարկությունը Միության անդամ պետության մաքսային մարմնի հանձնաժողով է ներկայացվում նախաձեռնողական կարգով կամ Անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի որոշման հիման վրա: Թիվ 284 կարգի 15-րդ կետով նախատեսված է, որ մաքսային մարմինների կողմից ընդունված նախնական որոշումներում, Միության անդամ պետությունների լիազորված մաքսային մարմինների կողմից ընդունված՝ ապրանքների առանձին տեսակի դասակարգման վերաբերյալ որոշումներում, Հանձնաժողովի կողմից ապրանքների տարբեր դասակարգումներ հայտնաբերվելու դեպքում՝ Հանձնաժողովն ապրանքի առանձին տեսակի դասակարգման վերաբերյալ որոշումն ընդունում է սեփական նախաձեռնությամբ:

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական բնույթի, Միության իրավունքի կազմում ընդգրկվող եւ Միության բոլոր անդամ պետությունների տարածքներում անմիջական կիրառության ենթակա որոշումներ:

17. ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ԵԱՏՄ ՄՕ 3-րդ գլխի դրույթների կիրառման նպատակներով՝ ապրանքների առանձին տեսակը ենթադրում է դասակարգման այնպիսի ընդհանուր հատկանիշներ ունեցող ապրանքների ամբողջություն, որոնք հնարավորություն են տալիս որոշակի անվանումներով, որոշակի մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների, ձեւափոխությանը պատկանող եւ այլ նմանատիպ առանձնահատկություններ ունեցող ապրանքները դասել մեկ ծածկագրի՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան:

18. Այսպիսով, Միության իրավունքի՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող ակտերը սահմանում են ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշման հետեւյալ հատկանիշները՝ այն չունի ձեւայնացված կառուցվածք եւ չի համապատասխանում ապրանքի դասակարգման մասին նախնական որոշման համար սահմանված՝ մաքսային փաստաթղթի չափորոշիչներին. դրա առարկան առանձին վերցված ապրանքներ չեն, այլ ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված՝ ապրանքների ամբողջությունն է, որոնց հիմնական առանձնահատկությունները հնարավորություն են տալիս միանշանակ դասակարգել այդ ամբողջությունն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ ծածկագրի. նման որոշում ընդունելու իրավասությամբ օժտված են Հանձնաժողովը եւ Միության անդամ պետությունների լիազորված մաքսային մարմինները. սահմանված պայմանների եւ հիմքերի առկայության դեպքում հենց իրենք են հանդես գալիս նման որոշում ընդունելու նախաձեռնությամբ. ապրանքների առանձին տեսակի դասակարգման վերաբերյալ որոշումը, Հանձնաժողովի կողմից ընդունվելու դեպքում, նորմատիվային բնույթ է կրում եւ պարտադիր է Միության բոլոր անդամ պետությունների տարածքներում, իսկ մաքսային մարմնի կողմից այն ընդունվելու դեպքում՝ պարտադիր է Միության այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմինն այն ընդունել է:

19. Դատարանի մեծ կոլեգիային շարադրվածը թույլ է տալիս հանգել հետեւյալ եզրակացության՝

ԵԱՏՄ ՄՕ 21-րդ, 22-րդ եւ 23-րդ հոդվածներում նշված որոշումները՝ ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը եւ ապրանքների առանձին տեսակի դասակարգման վերաբերյալ որոշումը (պարզաբանումը), մաքսային դասակարգման մասին որոշումների երկու տեսակներ են, որոնք հստակ տարանջատված են՝ ըստ ընդունման ձևի եւ կարգի, իրավական բնույթի, բովանդակության, ընդունման նպատակների ու հետեւանքների եւ գործողության ժամկետների:

ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետի եւ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները նաեւ տարբերվում են ըստ իրավական կարգավորման օբյեկտի, քանի որ այդ նորմերից առաջինը կանոնակարգում է ըստ ապրանքների տեսակային պատկանելության դրանց ամբողջության դասակարգման մասով նորմատիվ իրավական ակտի (այսուհետ՝ ՆԻԱ) ընդունման կարգը եւ հիմքերը, իսկ երկրորդը՝ անհատապես որոշվող անվանման որոշակի ապրանքի մասով՝ նշված ՆԻԱ-ին չհակասող անհատական կիրառման իրավական ակտի ընդունման կարգը եւ հիմքերը:

20. Դիմումատուի հարցին պատասխանի բազմակողմանիությունը եւ լրիվությունը ենթադրում է ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ կետերի հետ փոխկապակցվածության մեջ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ԵԱՏՄ 23-րդ հոդվածի 5-րդ կետի հետ հարաբերակցության մասին հարցի պարզաբանման անհրաժեշտությունը:

Դատարանի մեծ կոլեգիան Միության իրավունքի գործող ակտերի մեկնաբանության եւ կիրառման ձեւավորված գործելակերպի ուսումնասիրության հիման վրա փաստում է տվյալ հարցի լուծման համար կիրառման ենթակա նորմերի մեկնաբանության առնչությամբ երկու մոտեցումների առկայությունը, որոնք պայմանավորված են ԵԱՏՄ ՄՕ 3-րդ գլխի գործող խմբագրության առանձնահատկություններով:

21. Այդ մոտեցումներից մեկի համաձայն՝ ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետի իմաստային նշանակությունից հետեւում է, որ «որոշակի մականիշը, մոդելը,

ապրանքատեսակը, ձեւափոխությունը» դասվում են որոշակի նշանակության ապրանքների առանձնահատկությունների շարքին: Սակայն, եթե նշված նորմում խոսքը վերաբերում է տարբեր անվանումների եւ առանձնահատկությունների (մակնիշ, մոդել, ապրանքատեսակ, ձեւափոխություն) հնարավոր բազմությամբ ապրանքների ամբողջությանը, որոնք միեւնույն ժամանակ ընդհանուր դասակարգման հատկանիշներ ունեն, ապա ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետում խոսքը վերաբերում է որոշակի անվանման անհատապես որոշված ապրանքին:

22. ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ կետերի հետ փոխկապակցվածության մեջ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի բառացի մեկնաբանությունը նույնպես հաստատում է այն եզրակացությունը, որ ապրանքի որակավորման վերաբերյալ նախնական որոշումը պետք է առավելագույնս անհատականացնել, այսինքն՝ կիրառել ապրանքի յուրաքանչյուր որոշակի անվանման առնչությամբ:

ԵԱՏՄ ՄՕ 2-րդ հոդվածի 1-ին կետի 45-րդ ենթակետի համաձայն՝ ապրանք ասելով պետք է հասկանալ ցանկացած շարժական գույք, ինչպես նաեւ անշարժ գույքին հավասարեցված այլ տեղափոխվող իրեր:

23. ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունվում է ապրանքի՝ որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ եւ ձեւափոխություն ներառող յուրաքանչյուր անվանման առնչությամբ:

ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի քերականական կառուցվածքը հիմք չէ դրա նորմի ավելի լայն մեկնաբանման համար: ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի ձեւակերպման մեջ բոլոր եզրույթների եզակի թվով գործածումը մատնացույց է անում, որ այն ապրանքի յուրաքանչյուր անվանում, որի առնչությամբ դասակարգման վերաբերյալ նախնական որոշում է ընդունվում, սահմանվում է ապրանքն անհատականացնող հատկանիշների ամբողջությամբ, որոնք ընդգրկում են որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ, ձեւափոխություն:

Այսպիսով, ապրանքի ցանկացած նշված առանձնահատկության մասով անհամապատասխանությունը կարող է նախնական որոշում ընդունող մաքսային մարմնի կողմից գնահատվել որպես ապրանքի դասակարգման նպատակների համար ապրանքի անվանման մեջ տարբերության մատնանշում եւ, համապատասխանաբար, հանգեցնել նրան, որ անհրաժեշտ լինի առանձին ներկայացված դիմումի առնչությամբ՝ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի կարգով առանձին նախնական որոշում ընդունել:

24. Դիմումների ներկայացման սկզբունքի վրա հիմնված՝ նման որոշումներ ընդունելու ընթացակարգով նախատեսվում է, որ շահագրգիռ անձը, Միության անդամ պետության լիազորված մաքսային մարմին դիմում ուղարկելիս պարտավոր է դրանում արտացոլել որոշակի ապրանքին բնորոշ բոլոր առանձնահատկությունները: Համապատասխանաբար, հայտարարագրված ապրանքի յուրաքանչյուր անվանման համար պահանջվում է առանձին նախնական որոշում՝ նշելով անհատապես որոշված որոշակի մակնիշը, մոդելը, ապրանքատեսակը, ձեւափոխությունը:

25. ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված է, որ ապրանքի դասակարգման մասին նախնական որոշման ձեւը, դրա լրացման եւ այդպիսի նախնական որոշման մեջ փոփոխությունների (լրացումների) կատարման կարգը սահմանում է Հանձնաժողովը: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի ապրիլի 17-ի թիվ 58 որոշմամբ հաստատված են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի դասակարգման մասին նախնական որոշման ձեւի, դրա լրացման եւ այդպիսի նախնական որոշման մեջ փոփոխությունների (լրացումների) կատարման կարգը (այսուհետ՝ թիվ 58 կարգ):

Թիվ 58 կարգի 12-14-րդ, 16-րդ կետերի համաձայն՝ ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ձեւը պետք է պարունակի՝ «Ապրանքի անվանումը» 5-րդ սյունակում՝ տեղեկություններ ապրանքի անվանման մասին,

որոնք ներառում են որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ եւ ձեւափոխություն. «Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան» 6-րդ սյունակում՝ ապրանքի տասանիշ ծածկագիրը. «Ապրանքի նկարագրությունը» 7-րդ սյունակում՝ ապրանքի մանրամասն նկարագրությունը՝ նշելով բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ապրանքի միանշանակ դասակարգման եւ նախնական որոշման ձեւի 6-րդ սյունակում նշված տասանիշ ծածկագրին ապրանքը դասելու համար. «Ծառայողական նշումների համար» 9-րդ սյունակում՝ 9.1 համարի ներքո նշվում է մաքսային նպատակներով լրացուցիչ տեղեկատվությունը (անհրաժեշտության դեպքում), որը մաքսային մարմինը պետք է հաշվի առնի այն ապրանքի մաքսային հայտարարագրման ժամանակ, որի մասով ընդունվել է նախնական որոշում (օրինակ՝ անդամ պետությունների գործադիր իշխանության լիազորված մարմինների, ապրանք արտադրողների մասին տեղեկություններ, որոնցով հաստատվում է նախնական որոշման ձեւի 6-րդ սյունակում նշված տասանիշ ծածկագրին ապրանքի դասելը):

Ներկայացված հղումների համաձայն՝ նախնական որոշման մեջ անհրաժեշտ է արտացոլել եզակի թվով ապրանքի յուրաքանչյուր (որոշակի) անվանումը՝ նշելով որոշակի մակնիշը, մոդելը, ապրանքատեսակը եւ ձեւափոխությունը, ընդ որում, հայտարարագրվող ապրանքի նկարագրությունը պետք է պատճառ լինի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան դրա՝ ըստ մեկ տասանիշ ծածկագրի միանշանակ դասակարգման համար:

26. Միջազգային պայմանագիր հանդիսացող ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի դրույթների բովանդակությունը եւ թիվ 58 կարգի նորմերը՝ իրենց փոխկապակցվածության մեջ, վկայում են մաքսային իրավահարաբերությունները կարգավորող Միության իրավունքի այդ ակտերով Միությունում միասնական մաքսային կարգավորում ապահովելու համար ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ ընդունելու որոշակի կարգ սահմանելու մասին:

Ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումների սահմանակարգը նաեւ կապված է ԵԱՏՄ ՄՕ 13-15-րդ, 17-19-րդ գլուխներում պարունակվող ԵԱՏՄ ՄՕ նորմերի հետ եւ համապատասխանում է մաքսային հսկողության, մաքսային հայտարարագրման սկզբունքներին ու ընթացակարգերի նորմատիվ կարգավորմանը, նախատեսում է ապրանքի յուրաքանչյուր որոշակի անվանման (այդ թվում՝ հաշվի առնելով դրա մակնիշը, մոդելը, ապրանքատեսակը, ձեւափոխությունը, որոնք ապրանքի դասակարգման բնութագրեր չեն) հստակ անհատականացում: Նախնական որոշում ընդունելու համար պահանջվող՝ ապրանքի վերաբերյալ տեղեկությունների մանրամասնեցված այդ հավաքածուն սերտորեն կապված է մաքսային հայտարարագրի համապատասխան սյունակներում արտացոլված տեղեկությունների հետ եւ արտաքին տնտեսական գործունեության ոլորտում օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այդ ամենը պետք է նշված պարամետրի ազդեցության համատեքստում հաշվի առնել ապրանքների առանձին անվանումների մասով արտաքին առեւտրի վիճակագրության հավաստիության (օբյեկտիվության), ինչպես նշված է սույն խորհրդատվական եզրակացության 8-րդ կետում՝ որպես Միության անդամ պետությունների մաքսային քաղաքականության իրականացման գործիք կիրառվող մաքսային կարգավորման այս կամ այն միջոցների արդյունավետության ու ժամանակին լինելու վրա:

27. Հիշյալ իրավական նորմերի պարզաբանումը թույլ է տալիս եզրակացություն ձեւակերպել այն մասին, որ իրավասու մաքսային մարմինը նախնական որոշում տալու մասին դիմումի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կայացնում է ապրանքի՝ որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ եւ ձեւափոխություն ներառող յուրաքանչյուր անվանման առնչությամբ դասակարգման վերաբերյալ իր եզրակացությունը, եւ յուրաքանչյուր այդպիսի որոշում հաստատելու համար առանձին մաքսային փաստաթուղթ է տալիս:

Ինչպես հետեւում է գործի նյութերից, ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանման հետ կապված՝ տվյալ մոտեցումը ներկայումս կիրառում է Միության անդամ պետությունների մեծ մասը:

28. ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանման հետ կապված այլ մոտեցումը բխում է այն բանից, որ Պայմանագիրը եւ ԵԱՏՄ ՄՕ-ն չի պարունակում «ապրանքի դասակարգման մասին նախնական որոշում», «ապրանքի դասակարգման մասին նախնական որոշման ընդունում» հասկացությունների սահմանումները: Հետեւաբար, տվյալ հասկացությունները պետք է մեկնաբանել դրա սովորական իմաստով, հաշվի առնելով, որ այդ որոշումը իրավակիրառ ակտ է, որն իրավասու մաքսային մարմինն ընդունում է Միության մաքսային սահմանով տեղափոխման համար նախատեսվող ապրանքի նկատմամբ համապատասխան մաքսային ընթացակարգ կիրառելու նպատակով, որը, լինելով ԵԱՏՄ իրավունքով սահմանված կարգով ձեւակերպված, դառնում է մաքսային փաստաթուղթ:

Այսպիսի մոտեցման համաձայն՝ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի կարգավորման օբյեկտն է նախնական որոշումը՝ որպես իրավակիրառ ակտ ընդունելու կարգը, որը, ինչպես ոչ երկիմաստ բխում է նշված կետի տեքստից, պետք է կիրառվի ապրանքի՝ որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ եւ ձեւափոխություն ներառող յուրաքանչյուր անվանման առնչությամբ: Միեւնույն ժամանակ, ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետը մաքսային մարմնի համապատասխան ակտի ձեւակերպման կարգ չի սահմանում, ինչը ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 5-րդ կետի կարգավորման առարկան է:

29. Ինչպես հետեւում է գործի նյութերից, տվյալ մոտեցումը զարգացում է ունեցել Ղրղզստանի Հանրապետությունում: Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն առընթեր պետական մաքսային ծառայության շարադրված դիրքորոշման համաձայն՝ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետը թույլ է տալիս ընդունել ինչպես դասակարգման մասին մեկ նախնական որոշում՝ դրանում նշելով միեւնույն ապրանքի մի քանի տեսակներ, այնպես էլ ընդունել ապրանքի մեկ ապրանքատեսակի առնչությամբ մեկ նախնական որոշում: Այսպիսով, ներկայումս ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման պրակտիկան միատեսակ չէ:

30. Մեծ կոլեգիան համարում է, որ տվյալ հանգամանքներում ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի առարկա կազմող իրավահարաբերությունների կարգավորման նկատմամբ օպտիմալ մոտեցման վերաբերյալ հարցը, ինչը եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ներկա փուլում առավելագույն չափով համապատասխանում է Պայմանագրի եւ ԵԱՏՄ ՄՕ-ի օբյեկտին եւ նպատակներին, ինչպես նաեւ դրա վերաբերյալ՝ բոլոր անդամ պետությունների եւ Հանձնաժողովի կողմից ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի միատեսակ կիրառման ապահովմանը կոչված համապատասխան որոշման ընդունումը, կարիք ունի Հանձնաժողովի եւ անդամ պետությունների լրացուցիչ ուսումնասիրության:

31. Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան ներկայացնում է հետևյալ պարզաբանումը.

31.1. ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետի եւ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները կարգավորման տարբեր առարկաներ ունեն: ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 7-րդ կետը՝ ԵԱՏՄ 21-րդ հոդվածի 6-րդ կետի հետ փոխկապակցվածության մեջ, կարգավորում է ապրանքների առանձին տեսակների (այսինքն՝ ընդհանուր դասակարգման հատկանիշներ ունեցող ապրանքների սահմանված տեսակային ամբողջության) մաքսային դասակարգման հարցերը, այն դեպքում, երբ ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետը՝ ԵԱՏՄ ՄՕ 21-րդ հոդվածի 2-րդ կետի հետ փոխկապակցվածության մեջ, կանոնակարգում է Միության մաքսային տարածք ներմուծելու համար նախատեսվող որոշակի ապրանքի միայն յուրաքանչյուր անվանման մաքսային դասակարգման մասին նախնական որոշումներ ընդունելու հարցերը:

31.2. ԵԱՏՄ ՄՕ 23-րդ հոդվածի 4-րդ կետի գործող խմբագրությամբ չի թույլատրվում Միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից ապրանքի դասակարգման մասին նախնական որոշումն ընդունել՝ որպես ապրանքի մի քանի անվանումների, մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների եւ ձեւափոխության վերաբերյալ իրավակիրառ ակտ:

Միեւնույն ժամանակ, ապրանքի դասակարգման մասին նախնական որոշման ձեւը, դրա լրացման եւ այդպիսի նախնական որոշման մեջ փոփոխությունների (լրացումների) կատարման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

III. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմումատուին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրաիմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Ա.Ա. Զաբարա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաեւ

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան